

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/
МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО**

ԳՐԻԳՈՐ ՉՈՐԱՆՅԱՆ
ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ, ասպիրանտ

GRIGOR CHOBANYAN
YSU Faculty of Law, PhD Student

ГРИГОР ЧОБАНЯН
Аспирант юридического факультета ЕГУ

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ**

STATE SOVEREIGNTY IN THE FIELD OF FOREIGN INVESTMENTS

**ГОСУДАРСТВЕННЫЙ СУВЕРЕНИТЕТ В ОБЛАСТИ
ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ**

Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումից ի վեր օտարերկրյա ներդրումների ոլորտի կարգավորումները մեծ քննարկումների առիթ դարձան զարգացած և զարգացող երկրների համար: Մասնավորապես, զարգացած երկրներն առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում պետությունների՝ միջազգային իրավունքը հարգելու պարտականությանը (արագ, համարժեք և արդյունավետ փոխհատուցման վճարման իրավունք, օտարերկրյա ներդրողների նկատմամբ արդարացի վերաբերմունք և այլն), իսկ զարգացող երկրները, հղում կատարելով պետությունների ինքնիշխանության սկզբունքին, առավելապես ընդգծում էին սեփական բնական ռեսուրսների ազատ տնօրինման իրավունքը: Լատինական Ամերիկայի երկրներն ավանդաբար այն երկրներից էին, որոնք առանձնահատուկ ընդգծել են պետական ինքնիշխանության, ներքին գործերին չմիջամտելու սկզբունքները Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ հարաբերություններում, որպեսզի վերահաստատեն իրենց քաղաքական և տնտեսական անկախությունն արտաքին աշխարհից: Հենց այս տրամաբանությունից ելնելով Լատինական Ամերիկայի երկրները փորձում էին օտարերկրյա ներդրումները ենթարկել բացառապես ներպետական օրենսդրությանը և հյուրընկալ պետության դատարանների իրավասությանը: Արգենտինացի իրավաբան Կառլոս Կալվին (1822–1906 թթ.) առաջինն էր, որ փորձեց համակարգված կերպով ներկայացնել նման մոտե-

ցումը, ինչն էլ հայտնի դարձա «Կալվոյի դոկտրին» անվանմամբ¹: Կալվոյի դոկտրինն առաջ էր քաշում հետևյալ դրույթները.

ա) օրենքի առջև հյուրընկալ երկրի քաղաքացիների և օտարերկրացիների հավասարությունը,

բ) օտարերկրացիների և նրանց սեփականության ենթակայությունն այն երկրի օրենքին և իրավազորությանը, որտեղ նրանք կատարել են ներդրում,

գ) այլ կառավարությունների կողմից օտարերկրացիների և նրանց սեփականության հետ կապված վեճերին միջամտելուց ձեռնպահ մնալու պարտավորությունը,

դ) օտարերկրացիներին քաղաքացիական պատերազմների կամ անհնազանդությունների պատճառով պատճառված վնասի համար պարտականության բացակայություն, եթե տվյալ պետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ²:

Սակայն Կալվոյի դոկտրինը ժամանակի ընթացքում, չդիմակայելով քննադատություններին, ամբողջապես վերանայվեց: Սրա վառ վկայությունն է այն փաստը, որ հենց Լատինական Ամերիկայի երկրները սկսեցին ակտիվորեն միանալ օտարերկրյա ներդրումների հետ կապված հարաբերությունները կարգավորող մեխանիզմների, ինչպիսին է Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնը (ICSID)³:

1991 թ. Համաշխարհային բանկը սկսեց պատրաստել մի փաստաթուղթ, որում պետք է ներառվեին օտարերկրյա ուղիղ ներդրումների խթանման համար անհրաժեշտ սկզբունքները: Համաշխարհային բանկը նախագծեց «Օտարերկրյա ուղիղ ներդրումներին վերաբերմունքի մասին ուղեցույց» (Guidelines on the Treatment of Foreign Direct Investment): Այս ուղեցույցով խրախուսվեցին իրավաբանորեն պարտադիր ուժ ունեցող այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են երկկողմ ներդրումային ու բազմակողմ պայմանագրերը: Հետաքրքիր է, որ ուղեցույցն անդրադառնում է միայն հյուրընկալ պետության վարքագծին՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման տեսանկյունից և անդրադարձ չի կատարում օտարերկրյա ներդրողների պարտավորություններին:

Օտարերկրյա ներդրումների պաշտպանությանն ուղղված բազմակողմ կոնվենցիայի նախապատրաստման ջանքերը ձախողվեցին անգամ Տնտեսական համագործակցության եվրոպական կազմակերպության (ՏՀԵԿ) շրջանակում: 1965 թ. Համաշխարհային բանկի շրջանակներում ընդունվեց «Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման» կոնվենցիան⁴: Այսպիսով՝ ստեղծվեց Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնը (ICSID), որը դարձավ օտարերկրյա ներդրողի և հյուրըն-

¹ Տես *Lyman H. Heine*, Impasse and Accomodation: The Protection of Private Direct Foreign Investment in the Developing States, 14 Case W. Res. J. Int'l L. 465, 1982, հասանելի է՝ <https://scholarlycommons.law.case.edu/jil/vol14/iss3/4>, էջ 474:

² Տես *Schrijver, N. J.*, Sovereignty over natural resources: balancing rights and duties in an interdependent world, doctoral thesis, University of Groningen, The Netherlands, 1995, էջ 166:

³ Տես *Schrijver, N. J.*, նույն աշխատանքը, էջ 171:

⁴ Տես *Schrijver, N. J.*, նույն աշխատանքը, էջ 177:

կալ պետության միջև ծագած վեճերը կարգավորող հարթակ: *ICSID*-ը կարող է դառնալ ներդրումային վեճերի կարգավորման հարթակ միայն հետևյալ չափորոշիչների առկայության դեպքում.

- Կողմերը պետք է միացած լինեն *ICSID*-ին⁵(ենթակայություն),
- Կողմերից մեկը պետք է լինի *ICSID* կոնվենցիային միացած պետությունը⁶ և մյուս կողմը պետք է լինի *ICSID* կոնվենցիային միացած այլ պետության քաղաքացի (*ratione personae*),
- պետք է լինի ներդրումից ծագող վեճ (*ratione materiae*)⁷:

Լատինական Ամերիկայի երկրները երկար ժամանակ քննադատաբար էին մոտենում *ICSID*-ին մասնակցությանը, քանզի նրանք գտնում էին, որ այն հակասում է Կալվոյի դոկտրինին, քանզի *ICSID*-ը նախատեսում է ներդրումային վեճերի կարգավորման միջազգային գործընթացներ⁸: Մինչդեռ, հարկ է նշել, որ *ICSID*-ի շրջանակներում նշյալ միջազգային գործընթացները չեն նվազեցնում պետության ինքնիշխանության դերը: Մասնավորապես, *ICSID*-ին միացած են ինքնիշխան պետություններ, որոնք կարող են պահանջել ներպետական միջոցների սպառում՝ որպես արբիտրաժային համաձայնության պայման⁹, ինչպես նաև *ICSID*-ը պահանջում է արբիտրաժային տրիբունալից վեճը լուծել կողմերի համաձայնությամբ որոշված իրավունքով:

Կարող ենք պնդել, որ տնտեսական ինքնիշխանության արդյունավետ իրացման համար կարևորագույն նշանակություն ունի օտարերկրյա ներդրումների ոլորտում միջամտություն իրականացնելու հնարավորությունը, քանզի օտարերկրյա ներդրումների հոսքը դեպի հյուրընկալ պետություն երկակի ունի բնույթ: Մի կողմից օտարերկրյա ներդրումները բերում են իրենց հետ զգալի ֆինանսական միջոցներ, մյուս կողմից՝ դրանք կարող են առաջացնել ազգային անվտանգությանն առնչվող որոշակի խնդիրների: Օտարերկրյա ներդրողներն ինչպես կարող են օպերատիվորեն ներդրումների տեսքով կոնսոլիդացնել իրենց ռեսուրսները, այնպես էլ կարող են դուրս բերել իրենց կապիտալը հյուրընկալ երկրից: Հենց սա էլ այն պատճառներից մեկն է, որ պետությունները երբեմն օտարերկրյա ներդրումների նկատմամբ կիրառում են խիստ սահմանափակումներ այն ոլորտների մասով, որոնք կարևորագույն նշանակություն ունեն պետության տնտեսության կամ ազգային անվտանգության համար (օրինակ՝ ռազմաարդյունաբերություն, կապի և տրանսպորտի ոլորտ, առողջապահություն և այլն)¹⁰:

Հասկանալի պատճառներով պետությունները պաշտպանողական են սեփական անվտանգության և ինքնուրույնության հարցերում, միևնույն ժամանակ, կարիք ունեն նաև օտարերկրյա ներդրումների՝ սեփական տնտեսությունը զար-

⁵ Հայաստանի Հանրապետությունը միացել է ներդրումային վեճերի կարգավորման կոնվենցիային 1992 թ. սեպտեմբերի 16-ին:

⁶ *ICSID* կոնվենցիան ստորագրել և միացել են 163 պետություններ, հասանելի է՝ <https://icsid.worldbank.org/en/pages/about/database-of-member-states.aspx> :

⁷ Տե՛ս *ICSID* կոնվենցիա, հոդվ. 25:

⁸ Տե՛ս *Schrijver, N. J.*, նույն աշխատանքը, էջ 178:

⁹ Տե՛ս *ICSID* կոնվենցիա, հոդվ. 26:

¹⁰ Տե՛ս *Дмитриева Г.К., Викторова Н.Н.*, Суверенитет государства в контексте привлечения иностранных инвестиций, Актуальные проблемы российского права, 2018, (12), 26-38, էջ 34:

զացնելու համար: Հենց սրանում էլ կայանում է ինքնիշխանության հետ կապված խնդիրը, քանզի միջազգային ներդրումային իրավունքը միտված է պաշտպանելու կողմերի համատեղ շահերը, որը ներառում է մի շարք սկզբունքներ՝ սահմանափակելու պետության քայլերը, որը կհակասեն օտարերկրյա ներդրողի շահերին: Այս համատեքստում իրավունքների և պարտականությունների հավասարակշռությանը հասնելը չափազանց դժվար է, և իրավաբանները ձգտում են հավասարակշռել համընդհանուր և պարտադիր ավանդական միջազգային արժեքները ու համեմատաբար ժամանակակից ներդրումային պահանջների կողմից առաջադրվող պաշտպանությունը: Սա ներառում է պետությունների համար որոշակի սահմանափակումներ, որով պետություններն օրենսդիր գործունեություն իրականացնելիս պետք է հաշվի առնեն օտարերկրյա ներդրումների շահերի հետ կապված օրենքներ կամ այլ իրավական ակտեր ընդունելիս:

Օտարերկրյա ներդրումների թույլտվությունները հսկելու պետության իրավունքն, ըստ էության, անսահմանափակ է¹¹: Այս իրավունքի էությունն այն է, որ պետությունն իր ինքնիշխանության ուժով ինքն է սահմանում է ներքին ներդրումային իր քաղաքականությունը՝ ընդունելով համապատասխան օրենքներ և կարգավորումներ: Յուրաքանչյուր պետություն իրավունք ունի սահմանափակել դեպի իր տարածք օտարերկրյա ներդրումների ներհոսքը:

ՄԱԿ-ի տարբեր բանաձևեր հաստատում են հյուրընկալ պետության իրավունքը՝ իր տարածքում կարգավորելու և իրացնելու իր իրավասությունը օտարերկրյա կապիտալի և օտարերկրյա ներդրողի գործունեության նկատմամբ¹²: 1974 թ. Խարտիայի համաձայն՝ յուրաքանչյուր պետություն իրավունք ունի կարգավորելու և հսկելու օտարերկրյա ներդրումներն իր պետական իրավազորության գործողության շրջանակում¹³: 1985 թ. Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության (MIGA) կոնվենցիան ընդգծում է պետության իրավունքը՝ վերահսկողություն իրականացնելու օտարերկրյա ներդրումների նկատմամբ, սահմանելով, որ երաշխավորելով ներդրումը, գործակալությունը նույնպես կապահովի օտարերկրյա ներդրումների համապատասխանությունը հյուրընկալ երկրի օրենսդրությանն ու կարգավորումներին¹⁴:

Շատ քիչ դատական որոշումներ և արբիտրաժային որոշումներ են անդրադարձել կատարել պետության՝ օտարերկրյա ներդրումների կարգավորման իրավունքին յուրացման հետ չկապված գործերով¹⁵: *Klöckner*-ի գործով արբիտրաժային տրիբունալը նշեց, որ հյուրընկալ պետությունն իրավունք ունի ստանալու այն ամբողջ տեղեկատվությունը, որը վերաբերում է ներդրմանը այնքանով, որ-

¹¹ Տե՛ս *Фархутдинов И.З.*, *Иностранные инвестиции: вызов экономическому суверенитету*, Московский журнал международного права, № 3 (71) 2008, էջ 15:

¹² Տե՛ս օրինակ՝ UN General Assembly, *Implementation of General Assembly resolutions 2626 (XXV), 3202 (S-VI), 3281 (XXIX) and 3362 (S-VII)*., 21 December 1976, A/RES/31/178, available at: <https://www.refworld.org/docid/3b00f2324.html> [accessed 29 September 2019]:

¹³ Տե՛ս 1974 թ. Խարտիա, հոդվ. 2, մաս 2, ենթակետ (c):

¹⁴ Տե՛ս 1985 թ. Ներդրումային երաշխիքների բազմակողմ գործակալության (MIGA) կոնվենցիա, հոդվ. 12(d):

¹⁵ Տե՛ս *Schrijver, N. J.*, *Sovereignty over natural resources: balancing rights and duties in an interdependent world*, doctoral thesis, University of Groningen, The Netherlands, 1995, էջ 268:

քանով այն վերաբերելի է պետությանը և օտարերկրյա ներդրողը պարտավորություն ունի բացահայտելու նման տեղեկատվությունը¹⁶: *ELSI*-ի գործով Միջազգային արդարադատության դատարանը նշեց, որ հյուրընկալ պետությունն իրավունք ունի կարգավորելու, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների նկատմամբ իրականացնել իր իշխանությունից բխող լիազորությունները¹⁷:

1974 թ. Խարտիայի երկրորդ հոդվածի համաձայն՝ հյուրընկալ պետությունը կարող է կարգավորել և վերահսկել իր տարածքում օտարերկրյա ներդրումները¹⁸: Սա էլ հենց այն պատճառներից մեկն է, որ պետությունը՝ որպես ներդրումային պայմանագրի կողմ, կարող է ուժային դիրքերից պարտադրել որոշակի պայմաններ, որոնք կհամապատասխանեն իրենց ինքնիշխան շահերին: Տրիբունալները երբեմն անդրադառնում են պետության՝ օտարերկրյա ներդրումները կարգավորելու իրավունքին պետությունների տնտեսական ինքնորոշման սկզբունքի լույսի ներքո¹⁹, քանզի տնտեսական ինքնորոշման էությունը կայանում է ազատ ընտրության հնարավորության մեջ: Սակայն պետք է նշել, որ այդ ընտրության հնարավորությունն ավելի շատ վերաբերում է այս կամ այն տնտեսական համակարգն ընտրելուն, քան օտարերկրյա ներդրումները կարգավորելուն:

Վերահսկման իրավունք: Վերահսկման իրավունքը հյուրընկալ պետության հիմնական իրավունքներից է, որի ուժով պետությունն իրացնում է իր ինքնիշխանությունը՝ վերահսկելով ներդրումային ծրագիրը, ինչի էությունն այն է, որ հյուրընկալ պետությունը հետևի օտարերկրյա ներդրողի գործունեության համապատասխանությունը հյուրընկալ պետության ներպետական օրենսդրությանն ու կարգավորումներին:

Հյուրընկալ պետությունը իրավունք ունի արդյունավետ հսկողություն (control) իրականացնել օտարերկրյա ներդրումների նկատմամբ, ինչն էլ վկայում է պետության ինքնիշխանության մասին սեփական տարածքում ցանկացած օտարերկրյա ներդրման նկատմամբ:

Պետությունները, լինելով ինքնիշխան, իրավունք ունեն ինքնուրույն թույլատրելու օտարերկրյա ներդրողների մուտքը սեփական տարածք: Պետությունների իրավունք ունեն կարգավորելու օտարերկրյա ներդրումների հոսքը՝ սահմանելով արտոնություններ և որոշակի սահմանափակումներ օտարերկրյա ներդրողների համար, ընդունելով օրենքներ, որոնք կկարգավորեն օտարերկրյա ներդրողների մասնակցությամբ կազմակերպությունների ստեղծումն ու լուծարումը:

Մինչդեռ, պետության տնտեսական ինքնիշխանությունից բխող իրավազորությունները չեն կարող ունենալ անսահմանափակ բնույթ: Ինչպես նշվել է *Parkerings-Compagniet-ն ընդդեմ Լիպվայի* գործով, յուրաքանչյուր պետություն ունի իր օրենսդիր իշխանությունն իրացնելու «անքակտելի իրավունք», և ներդրողներն էլ պետք է գիտակցեն, որ «իրավունքը կարող է զարգանալ ժա-

¹⁶ Տե՛ս *Klöckner Industrie-Anlagen GmbH and others v. United Republic of Cameroon and Société Camerounaise des Engrais*, ICSID Case No. ARB/81/2:

¹⁷ Տե՛ս *Elettronica Sicula S.P.A. (ELSI) (United States of America V Republic of Italy)* Judgment of 20 July, 1989, in ICJ Reports (1989): 15:

¹⁸ Տե՛ս Խարտիա, հոդվ. 2:

¹⁹ Տե՛ս *Guntrip, Edward*, նույն աշխատանքը, էջ 12:

մանակի ընթացքում»։ սակայն դա չի նշանակում, որ պետությունը կարող է իր օրենսդիր իշխանությունը գործել անարդար միջոցներով²⁰։

Միջազգային ներդրումային իրավունքը որոշակի սահմաններ է ուրվագծել, որով սահմանափակվել է պետության բացարձակ ինքնիշխանությունը։ Օրինակ՝ պետությունն այլևս չունի բացարձակ անձեռնմխելիություն օտարերկրյա ներդրումային վեճերի շրջանակում։ Նմանօրինակ սահմանափակումներից խուսափելու համար պետությունները ստիպված կլինեն վարել մեկուսացված քաղաքականություն, դուրս կգան բոլոր տեսակի ներդրումային պայմանագրերից, ինչի հետևանքով չի զարգացնա տնտեսությունը և չի ներգրավվի համաշխարհային շուկային։

Երկկողմ ներդրումային պայմանագիրը (*BIT*) ներդրումների ոլորտում պետության ինքնիշխանությունն ուրվագծող գործիքներից մեկն են։ Երկկողմ ներդրումային պայմանագրերի նպատակը երկու ինքնիշխան պետությունների միջև որոշակի չափորոշիչների սահմանում է, որոնց նպատակն օտարերկրյա ներդրումների ներգրավվումն է հյուրընկալ պետության վարքագծի անորոշությունը կամ կամայական գործողությունները սահմանափակելու միջոցով։ Սորնարաջայի կարծիքով, երկկողմ ներդրումային պայմանագրերը սահմանափակում են պետության ինքնիշխանությունը²¹։ Մասնավորապես, այս տեսակետի համաձայն՝ ներդրումային պայմանագրերը սահմանափակում են օտարերկրյա ներդրումներին միջամտելու գործընթացները կարգավորելու իրավունքը, ինչի արդյունքում քայքայվում է հյուրընկալ պետության ինքնիշխանությունը։ Մինչդեռ, Ա. Ջոնսոնի կարծիքով՝ պետության՝ ներդրումների ոլորտում կարգավորելու իրավունքի որոշակի սահմանափակումներն էական նշանակություն ունեն նվազեցնելու օտարերկրյա ներդրողների ռիսկերը, ինչն էլ ինքնին խթան կհանդիսանա օտարերկրյա ներդրումներ ներգրավվելու համար²²։

Երկկողմ ներդրումային պայմանագիրն օտարերկրյա ներդրողների համար նախատեսում են մի շարք իրավունքներ, ներառյալ՝ հյուրընկալ պետության կողմից արդարացի վերաբերմունքը (*equitable treatment*), սեփականազրկման (*expropriation*) դեպքում պատշաճ փոխհատուցման երաշխավորումը։ Օտարերկրյա ներդրողի պետությունը և հյուրընկալ պետությունը պետք է ձգտեն ապահովել, որ օտարերկրյա ներդրման նկատմամբ վերաբերմունքը լինի միջազգային իրավունքին համապատասխան։

Հյուրընկալ պետությունն իր ինքնիշխանության ուժով կարող է կնքել նաև միջազգային ներդրումային պայմանագրեր, որոնք իրենց հերթին կարգավորում են կոնկրետ ներդրումային ծրագրի հետ կապված իրավահարաբերությունները և պարունակում է դրա հետ կապված բոլոր մանրամասները, ներառյալ՝ կողմերի իրավունքներն ու պարտականությունները։ Իր բովանդակությամբ այն տար-

²⁰ Տե՛ս *Parkerings-Compagniet AS v Republic of Lithuania*, ICSID Arbitration Case No. ARB/05/8, 2007, para 332:

²¹ Տե՛ս *Sornarajah, M.*, *The International Law on Foreign Investment*. Cambridge: Cambridge University Press, 2004, doi:10.1017/CBO9780511617027, էջ 7:

²² Տե՛ս *Alec Johnson*, *Rethinking Bilateral Investment Treaties in Sub-Saharan Africa*, *Emory Law Journal*, 2009-10, 919:

բերվում է *BIT-ներին*: Մասնավորապես, այն կարգավորում է կոմերցիոն հարաբերությունները, ելնելով ներդրումային ծրագրի առանձնահատկություններից, և պարունակում է դրույթներ, որոնք միտված են պաշտպանելու օտարերկրյա ներդրողի շահերը: Միևնույն ժամանակ, պետք է ի նկատի ունենալ, որ հյուրընկալ պետության և օտարերկրյա ներդրողի միջև ծագած վեճը կարող է հանգեցնել ինչպես *BIT*-ի, այնպես էլ՝ ներդրումային պայմանագրի խախտմանը:

Վերոնշյալ պայմանագրերի (*BIT* և միջազգային ներդրումային պայմանագրեր) պայմանագրերի նկատմամբ կիրառվում է «*pacta sunt servanda*» սկզբունքը, որի համաձայն՝ պետք է պահպանվեն պայմանային պարտավորությունները: Հետևաբար՝ ցանկացած վեճ, որը կապված է օտարերկրյա ներդրման գործունեության հետ, կարող է հանդիսանալ ներդրումային պայմանագրի խախտում: Ինչպես նշվել է ՄԱԿ-ի ԳԱ 1803 բանաձևում, «*pacta sunt servanda*» սկզբունքը վերաբերելի է ներդրումային պայմանագրերին²³: Ավելին, ինչպես Միջազգային արդարադատության մշտական պալատն (*PCIJ*) է 1934 թ. նշում *Lighthouse*-ի գործով, «ենթադրվում է, որ պայմանագրի կողմերը մշտապես պետք է գործեն ազնվորեն և բարեխղճորեն»²⁴: Նույն գործով Միջազգային արդարադատության մշտական պալատի կողմից կայացված վճռից կարող ենք եզրակացնել նաև, որ բարեխղճության սկզբունքը կիրառելի է թե՛ մասնավոր և թե՛ միջազգային հանրային իրավունքում:

Այս համատեքստում կարելի է մեջբերել «*Սաուդյան Արաբյան ընդդեմ Aramco*»-ի գործը, որտեղ արբիտրաժային տրիբունալը նշել, որ պետությունը չի կարող փոփոխել կոնցեսիան կարգավորումների միջոցով: Մասնավորապես, արբիտրաժային տրիբունալը պատճառաբանել է, որ նավթային կոնցեսիան չի ներառում հանրային ծառայություն, վարչական պայմանագիր (*administrative contract*) տարրեր, այլ՝ սովորական մասնավոր բնույթ կրող պայմանագիր է²⁵: Համանման եզրահանգման է եկել նաև ««*Texaco*»-ն ընդդեմ *Լիբիայի*» գործով արբիտրաժային տրիբունալը²⁶:

Հաճախ է քննարկվում այն հարցը, թե արդյոք միջազգային ներդրումային պայմանագրերը չեն սահմանափակում պետությունների ինքնիշխանությունը²⁷:

Ներդրումային գործերով արբիտրաժային տրիբունալներն իրենց որոշումներում անդրադարձ են կատարում ինքնիշխանությանը հիմնականում պետության՝ օտարերկրյա ներդրումները հսկելու իրավունքի համատեքստում: Արբիտրաժային տրիբունալն այս իրավունքին անդրադարձ է կատարում, մասնավորապես, միջազգային ներդրումային համաձայնագրերում նախատեսված այն բա-

²³ Տե՛ս *B.S. Vasani; D.E. Vielleville, Esq.*; “Sovereignty Over Natural Resources Versus Rights Under Investment Contracts: Which One Prevails?” TDM 2 (2008), www.transnational-dispute-management.com URL: www.transnational-dispute-management.com/article.asp?key=1211, էջ 8:

²⁴ Տե՛ս *Lighthouses Case between France and Greece (Fr. v. Greece)*, 1934 P.C.I.J. (ser. A/B) No. 62 (Mar. 17), para. 191:

²⁵ Տե՛ս *ARAMCO-Award*, ILR 1963, at 117 et seq:

²⁶ Տե՛ս *B.S. Vasani; D.E. Vielleville*, նույն աշխատանքը, էջ 10:

²⁷ Տե՛ս *Guntrip, Edward*, Self-determination and foreign direct investment: reimagining sovereignty in international investment law. *International and Comparative Law Quarterly*, 2016, 65 (4). pp. 829-857. ISSN 0020-5893, էջ 6:

ցառություններին, որոնք ուղղված են ներդրումների պաշտպանության ստանդարտներին ուղղված հարցերին: Հետևաբար՝ տրիբունալը ստիպված է լինում անդրադարձ կատարել նաև պետությունների ինքնիշխանությանը վերաբերող խնդիրներին: Պետությունների ինքնիշխանության հարցերին անդրադարձ կարող է կատարվել նաև ներդրումների պաշտպանության ստանդարտներ սահմանող հստակ նորմերի բացակայության պայմաններում: Այս համատեքստում հետաքրքիր է ուսումնասիրել, թե ներդրումային գործերով արբիտրաժային տրիբունալներն ինչպես են գնահատում պետությունների ինքնիշխանության դերը միջազգային ներդրումային համաձայնագրերի շրջանակներում:

«ADC-ն ընդդեմ Հունգարիայի» գործով (գործը վերաբերում էր օտարերկրյա ներդրողի անուղղակ յուրացմանը վերաբերող պահանջին) տրիբունալը նշեց, որ պատասխանողի պնդումն առ այն, որ ներդրողի դեմ կատարված քայլերը հանդիսացել են «բացառապես միջազգային իրավունքի համաձայն՝ իր ներքին տնտեսական և իրավական հարցերը կարգավորելու իրավունքների իրացում» անընդունելի են²⁸: Տրիբունալի պնդմամբ, «չնայած նրան, որ ինքնիշխան պետությունն ունի իր ներքին գործերը կարգավորելու անքակտելի իրավունք, այդ իրավունքներն անսահմանափակ չեն և պետք է ունենան իրենց սահմանները»: Շարունակելով՝ տրիբունալը նշում է, որ պետությունը, միանալով երկկողմ ներդրումային պայմանագրերի, ստանձնում է որոշակի պարտավորություններ, որոնք էլ ուրվագծում են օտարերկրյա ներդրումների նկատմամբ հսկողություն իրականացնելու (կարգավորելու) իրավունքի սահմանները²⁹: Փաստորեն, նման եզրահանգմամբ տրիբունալը հաստատեց, որ պետության ինքնիշխանությունը բացարձակ բնույթ չունի և սահմանափակված է միջազգային իրավունքի համաձայն ստանձնած պարտավորություններով:

Ի տարբերություն վերոնշյալ նախադեպի՝ արբիտրաժային տրիբունալներն ավելի հաճախ անդրադարձ են կատարել հյուրընկալ պետության՝ օտարերկրյա ներդրումները կարգավորելու անքակտելի իրավունքին³⁰: Օրինակ՝ «Suez and Inter Agua-ն ընդդեմ Արգենտինայի» գործով արբիտրաժային տրիբունալն առանձնակի ընդգծեց պետության իրավունքը՝ կարգավորելու օտարերկրյա ներդրումները յուրացման շրջանակում³¹: Ավելին՝ «Lemire-ն ընդդեմ Ուկրաինայի» գործով արբիտրաժային տրիբունալը նշեց, որ օտարերկրացիների արտոնյալ վերաբերմունքը և Ուկրաինայի կողմից հանրային շահի շրջանակում իր ինքնիշխանության ուժով իրեն պատկանելիք պաշտպանության վերաբերյալ օրենքների ընդունումը պետք է փոխադարձաբար հավասարակշռված լինեն³²:

«Parkerings Compagniet-ն ընդդեմ Լիտվայի» գործով տրիբունալը նշեց, որ թե-

²⁸ Տե՛ս *ADC Affiliate Limited and ADC & ADMC Management Limited v. The Republic of Hungary*, ICSID Case No. ARB/03/16, para. 423:

²⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁰ Տե՛ս *Guntrip, Edward*, նույն աշխատանքը, էջ 7:

³¹ Տե՛ս *Suez, Sociedad General de Aguas de Barcelona S.A., and InterAguas Servicios Integrales del Agua S.A. v. The Argentine Republic*, ICSID Case No. ARB/03/17:

³² Տե՛ս *Joseph C. Lemire v Ukraine*, ICSID Case No. ARB/06/18, Decision on Jurisdiction and Liability, 21 January 2010:

պետ պետությունն իրավունք ունի «սահմանել, փոփոխել կամ չեղարկել օրենքները սեփական հայեցողությամբ», այնուամենայնիվ, պետությունն իր օրենսդիր գործունեությունը չպետք է իրականացնի անարդար կամ ոչ ողջամիտ կերպով³³: Այսպիսի վերլուծություն իրականացնելիս տրիբունալն անդրադարձ է կատարում օտարերկրյա ներդրումների նկատմամբ արդար և անաչառ վերաբերմունքի չափորոշիչին (Fair Equitable Standard): Մի շարք հեղինակների կարծիքով, հենց այս չափորոշիչն է այն ամենակարևոր չափորոշիչը, որով պետությունները ենթարկվում են պատասխանատվության օտարերկրյա ներդրողների նկատմամբ կատարած գործողությունների համար³⁴: Հենց անաչառ վերաբերմունքի չափորոշիչն է, որ սահմանափակում է պետության կամայական գործողությունների հնարավորությունը:

Միջազգային առևտրային պալատի ուղեցույցները (*ICC Guidelines*) կոչ են անում հյուրընկալ պետությունների կառավարություններին հետևել միջազգային իրավունքի սկզբունքներին, այդ թվում՝ օտարերկրյա սեփականության նկատմամբ արդար և անաչառ վերաբերմունքի սկզբունքին³⁵: Անդրազգային կորպորացիաների մասին ՄԱԿ-ի վարքագծի կանոնների նախագիծը սահմանում է, որ պետությունները պետք է բարեխղճորեն կատարեն իրենց միջազգային պարտավորությունները և «անդրազգային կորպորացիաները պետք է ստանան արդար և անաչառ վերաբերմունք այն պետություններում, որտեղ նրանք գործում են»³⁶:

OECD-ն սահմանում է արդար և անաչառ վերաբերմունքի չափորոշիչ համար հինգ էական տարրերը. պաշտպանելու պարտականություն, պատշաճ ընթացակարգ (*due process*), թափանցիկություն, բարեխղճություն, ազնվություն և անաչառություն³⁷:

Օտարերկրյա ներդրողներին պաշտպանող և պետությունների՝ օտարերկրյա ներդրումների կարգավորման իրավունքը սահմանափակող հայեցակարգ է նաև ներդրողի իրավաչափ ակնկալիքի սկզբունքը: Իրավաչափ ակնկալիքի հասկացության անդրադարձ է կատարվել *Thunderbird*-ի գործում հետևյալ կերպ. «Մի իրավիճակ, որտեղ պայմանագրի կողմի գործողությունը ստեղծում է ողջամիտ և արդարացված ակնկալիք ներդրողի մոտ՝ գործելու այդ գործողությանը վստահելով, այնպես, որ *NAFTA*-ի անդամի կողմից այդպիսի ակնկալիքների չապահովումը կարող է վնաս հասցնել ներդրողին»³⁸: Հենց այս սահմանումից էլ կարող ենք հասկանալ, որ «իրավաչափ ակնկալիքների» շրջանակը հստակ չէ և պետք է դիտարկվի յուրաքանչյուր գործի շրջանակում՝ հաշվի առնելով տվյալ գործի փաստական հանգամանքներից բխող առանձնահատկությունները: «*LG&E ընդդեմ Արգենտինայի*» գործով տրիբունալը փորձեց ավելի համապարփակ նկա-

³³ *Stu Parkerings-Compagniet AS v. Republic of Lithuania*, ICSID Case No. ARB/05/8:

³⁴ Տե՛ս օրինակ՝ *Katia Yannaca-Small*, “Fair and Equitable Treatment in International Investment Law,” in *International Investment Law: A Changing Landscape* 73, OECD, 2005:

³⁵ Տե՛ս *Schrijver, N. J.*, նույն աշխատանքը, էջ 327:

³⁶ Տե՛ս Draft UN Code of Conduct on TNCs, UN Doc. E/1990/94. paras. 49 and 51:

³⁷ Տե՛ս OECD Draft Multilateral Agreement on Investment, OECD doc DAFFE/MAI(98)8/REV1:

³⁸ Տե՛ս *International Thunderbird Gaming Corporation v Mexico*, Award, IIC 136 (2006), 26th January 2006, Ad Hoc Tribunal (UNCITRAL), para 147:

րագրել օտարերկրյա ներդրողի իրավաչափ ակնկալիքները. «Դրանք հիմնված են հյուրընկալ պետության կողմից ներդրման ժամանակ առաջարկված պայմանների վրա. դրանք չեն կարող միակողմանիորեն սահմանվել կողմերից մեկի կողմից. դրանք պետք է գոյություն ունենան և կիրառվեն օրենքով. հյուրընկալ պետության կողմից միջամտության դեպքում ներդրողին վնասներ հատուցելու պարտավորություն է առաջանում, բացի անհրաժեշտության դեպքերից, այնուամենայնիվ, ներդրողի արդար ակնկալիքները չեն կարող չնախատեսել այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են բիզնես ռիսկերը կամ արդյունաբերության օրինաչափությունները»³⁹: Այս գործով տրիբունալն առանձնացրեց հատուկ երաշխիքի առկայություն, որի վրա էլ հիմնված էր օտարերկրյա ներդրողի իրավաչափ ակնկալիքը: Մասնավորապես՝ տրիբունալն անդրադարձավ այն կարգավորումներին, որոնցով կարգավորվում է գազի արդյունաբերությունը, որը սահմանել և կարգավորում էր սակագների համակարգը՝ երաշխավորելով ներդրման արժեքը: Այս դեպքում պետությունը համապատասխան երաշխիքներ տվել էր ոչ միայն տվյալ օտարերկրյա ներդրողին, այլև՝ երաշխիքներն ունեին ընդհանուր բնույթ⁴⁰: Մինչդեռ, այլ գործերով, որոնցից կարելի է առանձնացնել «*Pakering-ն ընդդեմ Լիտվայի*» գործը, տրիբունալը հանգենք նրան, որ երաշխիքները կարող են լինել հստակ խոստումի ձևով կամ ենթադրվող, երբ «պետությունը երաշխիքներ է ապահովում, որոնք ներդրողները հաշվի կառնեն ներդրում իրականացնելիս»⁴¹: Նույն գործով տրիբունալը նշեց, որ ներդրողն ունի որոշակի «կայունության և կանխատեսելիության իրավունք»⁴²:

Պետք է ընդգծել, որ իրավաչափ ակնկալիքների խախտման հիմքով պահանջ ներկայացնելու համար ներդրողին բավարար չէ միայն հյուրընկալ պետության կողմից հստակ երաշխիքների ներկայացման փաստը: Սա նշանակում է, որ օտարերկրյա ներդրողը պետք է պատշաճ հետազոտություն (due diligence) իրականացնի հյուրընկալ պետությունում առկա ռիսկերի վերաբերյալ: Ավելին՝ ներդրողը չի կարող հիմնվել հյուրընկալ պետության կողմից տրված ապօրինի երաշխիքների վրա: Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է, որ հյուրընկալ պետությունն ապահովի արդար և անաչառ վերաբերմունքի կարևորագույն ստանդարտներից մեկը՝ թափանցիկությունը, ինչի շնորհիվ օտարերկրյա ներդրողն առավելագույնս արդյունավետ կարող է գնահատել սեփական ռիսկերը: Օտարերկրյա ներդրումների նկատմամբ արդար և անաչառ վերաբերմունք չապահովելու համար պետությունները կարող են կանչվել պատասխանատվության:

Հյուրընկալ պետության կողմից նշյալ իրավաչափ ակնկալիքների և օտարերկրյա ներդրումների հետ կապված այլ խախտումները կարող են արդարացվել, մասնավորապես՝ միջազգային իրավունքին համահունչ հակազդման միջոցներով (countermeasures)⁴³: «*ADM-ն ընդդեմ Մեքսիկայի*» գործով, որն առնչվում է

³⁹ Տե՛ս *LG&E Energy Corp., LG&E Capital Corp., and LG&E International, Inc .v. Argentine Republic*, ICSID Case No. ARB/02/1:

⁴⁰ Տե՛ս *LG&E v. Argentine, para 122*:

⁴¹ Տե՛ս *Pakerings-Compagniet AS v. Republic of Lithuania*, ICSID Case No. ARB/05/8, էջ 68:

⁴² Տե՛ս *Pakerings-Compagniet AS v. Republic of Lithuania*, էջ 331:

⁴³ Տե՛ս *Viñuales, J. E.*, Customary Law in Investment Regulation, Italian Yearbook of International Law, 23

ավկոհոլային խմիչքների և օշարակների հարկմանը, դիմումատուն, որը կրել էր հյուրընկալ երկրի կողմից կիրառված միջոցների ազդեցությունը, պնդում էր, որ հարկերը խախտում էին օտարերկրյա ներդրողների պաշտպանությանը վերաբերող *NAFTA-ի* 11-րդ գլխով սահմանված միջոցները: Պատասխանող կողմն իր քայլերի իրավաչափությունը հիմնավորելու համար հղում կատարեց հակազդման միջոցներին, որոնք կիրառվել էին ԱՄՆ-ի կողմից *NAFTA-ի* խախտման ի պատասխան: Տրիբունալը, քննարկելով այն հարցը, թե արդյոք *NAFTA-ն* ներառում էր հակազդման միջոցներին վերաբերող կարգավորում, նշեց, որ 11-րդ գլուխը չի արգելում կամ թույլատրում հակազդման միջոցների կիրառումը: Մասնավորապես, տրիբունալը նշեց, որ հակազդման միջոցների կիրառման հարցը պետք է քննարկել ոչ թե կոնկրետ միջազգային պայմանագրի, այլև՝ միջազգային սովորության իրավունքի լույսի ներքո և յուրաքանչյուր դեպքում պետք է հասկանալ, թե արդյոք հյուրընկալ պետության քայլերը համապատասխանում են սովորության իրավունքի համապատասխան հակազդման միջոցների չափորոշիչներին⁴⁴: Միջազգային սովորության իրավունքի լույսի ներքո քննարկելով ԱՄՆ-ի դեմ իրականացված քայլերը, տրիբունալը գտավ, որ հարկային ոլորտում կատարված այդ քայլերը չէին հանդիսանում հակազդման միջոցներ:

Ինչպես արդեն իսկ քննարկվեց սույն աշխատանքում, օտարերկրյա ներդրումները պաշտպանելու պարտականությունը համարվում է միջազգային սովորության և պայմանագրային իրավունքի մաս⁴⁵: Մասնավորապես, ներդրումային երկրողմ պայմանագրերից շատերը պարունակում են դրույթ «պաշտպանության և անվտանգության ապահովման» վերաբերյալ: Այս պարտավորության էությունն այն է, որ հյուրընկալ պետությունը պետք է պաշտպանի ներդրողի շահեր բոլոր նրանցից, ում գործողությունները վտանգ են ներկայացնում օտարերկրյա ներդրողին:

Այս պարտավորության ապահովման համար պետությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները կանխելու համար այն վնասները, որոնց հնարավորության մասին տեղյակ է պետությունը: Հետևաբար, հյուրընկալ պետությունը պետք է առնվազն իրականացնի պատշաճ ուսումնասիրություն՝ հասկանալու համար հնարավոր ռիսկերի շրջանակը, հսկողության չափորոշիչների մակարդակը: Պատշաճ ուսումնասիրություն (*due diligence*) իրականացնելու պարտավորությունն ամրագրված է, մասնավորապես՝ «Օտարերկրյա սեփականության պաշտպանության մասին» ՏՀԶԿ կոնվենցիայի նախագծի 1-ին հոդվածում: Այս պարտավորությանն անդրադարձ է կատարվել նաև արբիտրաժային տրիբունալների կողմից: Մասնավորապես, «*Biwater Gauff-ն ընդդեմ Տանզանիայի*» գործով *ICSID* արբիտրաժային տրիբունալը նշեց, որ պետությունը կարող է պատասխանատվության ենթարկվել օտարերկրյա ներդրումների պաշտպանությանն ուղղված ողջամիտ կանխարգելիչ գործողությունները ձախողելու համար⁴⁶:

(1), 23-48, 2014, էջ 39:

⁴⁴ Տե՛ս *Archer Daniels Midland and Tate & Lyle Ingredients Americas, Inc. v. United Mexican States*, ICSID Case No. ARB(AF)/04/5, paras. 120-123:

⁴⁵ Տե՛ս *Viñuales, J. E.*, նույն աշխատանքը, էջ 126:

⁴⁶ Տե՛ս *Biwater Gauff (Tanzania) Limited v. United Republic of Tanzania*, ICSID Case No. ARB/05/22:

Հարկ է նշել, որ պետություններն ապահովագրված չեն անիրատեսական խոստումներ տալուց՝ ավելի գրավիչ ներդրումային դաշտ ցույց տալու նպատակով: Սակայն նման խոստումների իրականացման ձախողումը կարող է հանգեցնել պետությունների պատասխանատվության: Համանման պնդումներ արվել են արբիտրաժային տրիբունալների կողմից մի շարք գործերով, որոնցից կարող ենք առանձնացնել «*Methanex-ն ընդդեմ ԱՄՆ-ի*» գործը⁴⁷:

Պետությունները պարտավորություն ունեն նաև պաշտպանելու նաև նյութական և ոչ նյութական ներդրումային ակտիվները: Այս հարցին անդրադարձ է կատարվել «*Rumeli-ն ընդդեմ Ղազախստանի*» գործում, որտեղ տրիբունալն ընդգծեց պետության պարտավորությունը՝ ապահովելու օտարերկրյա ներդրումները ֆիզիկական վնասներից⁴⁸: Իսկ «*Azurix-ն ընդդեմ Արգենտինայի*» գործով տրիբունալը նշեց, որ օտարերկրյա ներդրումների պաշտպանությունը տրամադրվում է ֆիզիկական պաշտպանության շրջանակից դուրս⁴⁹:

Պետության ինքնիշխանության հետ կապված հարցերը ծագում են ոչ միայն պետության պատասխանատվության կանչելու պարագայում, այլև վեճի լուծման ընթացակարգում, երբ տրիբունալը կայացնում է որոշում և որոշման կատարման կարիք է առաջանում: Պետությունները երբեմն վկայակոչում են իրենց անձեռնմխելիությունը, ինչը ենթադրում է, որ պետությունն իրավունք ունի որոշել իր ներքին հարցերն առանց այլ պետությունների, միջազգային ներդրումային վեճերի շրջանակում այլ իրավագործությունների միջամտության: Հետևաբար՝ անհրաժեշտ է հասկանալ ինքնիշխան պետության անձեռնմխելիության ազդեցությունն արբիտրաժային գործընթացում: Ընդհանուր սկզբունքի համաձայն պետությունն ինքնավար արտոնություններ ունի այն ամենի նկատմամբ ինչ տեղի է ունենում իր տարածքում, հետևաբար՝ ունի էապես ավելի մեծ իշխանություն, քան իր տարածքում ներդրում իրականացնողները: Հենց այս արտոնությունն էլ կարող է օգտագործվել արբիտրաժային տրիբունալների իրավագործությունից անձեռնմխելիության փաստարկով խուսափելու համար⁵⁰:

Աբսոլյուտիստների համաձայն՝ պետություններն այլ իրավագործություններից ունեն բացարձակ անձեռնմխելիություն: Մինչդեռ, ժամանակակից աշխարհում, ուր օրեցօր ավելի է զարգանում գլոբալ տնտեսական միջավայրը և միջազգային առևտուրը, դժվար է պատկերացնել, որ պետությունները կկարողանան զարգացնել իրենց տնտեսությունը՝ մշտապես հղում կատարելով բացարձակ անձեռնմխելիության հայեցակարգի վրա: Հետևաբար՝ հաշվի առնելով ժամանակակից աշխարհում միջազգային առևտրում պետությունների ակտիվ ներգրավվածությունը, առաջ է քաշվել պետությունների սահմանափակ անձեռնմխելիության հայեցակարգը⁵¹: Այս հայեցակարգի էությունն այն է, որ պետությունն այլ իրավագործություններից համարվում է անձեռնմխելի այն դեպքում, երբ պետության

⁴⁷ Տե՛ս *Methanex Corporation v United States of America*, NAFTA, Award 3 Aug 2005:

⁴⁸ Տե՛ս *Rumeli Telekom A.S. and Telsim Mobil Telekomunikasyon Hizmetleri A.S. v. Republic of Kazakhstan*, ICSID Case No. ARB/05/16, Para 668:

⁴⁹ Տե՛ս *Azurix Corp. v. The Argentine Republic*, ICSID Case No. ARB/01/12, para. 408:

⁵⁰ Տե՛ս *Viñuales, J. E.*, նույն աշխատանքը, էջ 184:

⁵¹ Տե՛ս նույն տեղում, էջ 185:

գործողությունները բխում են իր ինքնիշխանությունից բխող լիազորություններից (*jure imperii*), մինչդեռ, պետությունը չի կարող օգտվել իր անձեռնմխելիության արտոնություններից այն դեպքում, երբ իր գործողությունները ունեն բացարձակ կոմերցիոն բնույթ, որը կարող էր իրականացնել ցանկացած այլ մասնավոր ընկերություն (*jure gestionis*):

Ամփոփելով, վերոնշյալից պարզ է դառնում, որ օտարերկրյա ներդրումների իրավասուների պաշտպանության համար ուրվագծվել են պետության ինքնիշխանության իրացման որոշակի սահմաններ: Այդպիսի սահմանափակումներն իրենց տեղն են գտել երկկողմ ներդրումային համաձայնագրերում, կոնկրետ ներդրումային պայմանագրերում: Միջազգային սովորութային իրավունքը նույնպես պաշտպանում է օտարերկրյա ներդրողների շահերը պետությունների կամայական գործողություններից: Պետություններն իրենց հերթին գիտակցում են, որ դժվար կկարողանան ներգրավել օտարերկրյա ներդրումներ առանց այս սահմանափակումների, քանզի օտարերկրյա ներդրողները ներդրողները նախևառաջ մտահոգվում են սեփական բիզնեսին սպառնացող այն ռիսկերի մասին, որոնք բխում են պետության ինքնիշխանության իրացումից: Ժամանակակից միջազգային իրավական մեխանիզմները նախատեսում են պետությունների պատասխանատվություն այն դեպքերում, երբ խախտվում է օտարերկրյա ներդրողի՝ երկկողմ ներդրումային համաձայնագրերով, կոնկրետ ներդրումային պայմանագրով սահմանված իրավունքները կամ այն իրավունքները, որոնք դարձել են միջազգային սովորութային իրավունքի մաս:

Այսպիսով, կարող ենք նշել, որ թեև պետություններն ունեն օտարերկրյա ներդրումների ոլորտում լայն լիազորություններ, սակայն այդ լիազորությունները սահմանափակված են ժամանակակից միջազգային իրավական մի շարք մեխանիզմներով: Այսպիսի մեխանիզմներից կարելի է առանձնացնել երկկողմ ներդրումային համաձայնագրերը և միջազգային ներդրումային պայմանագրերը: Օտարերկրյա ներդրողների իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության ուղղված դրույթներ իրենց տեղն են գտել մի շարք միջազգային պայմանագրերում, իսկ որոշ սկզբունքներ (օրինակ՝ արդար և անաչառ վերաբերմունքի սկզբունքը) դարձել է միջազգային սովորութային իրավունքի մաս: Ժամանակակից միջազգային իրավական համակարգում ձևավորվել են նաև հարթակներ, որոնցից կարելի է առանձնացնել *ICSID*-ը, որտեղ պետությունները կարող են օտարերկրյա ներդրողների իրավունքները խախտելու համար պատասխանատվության ենթարկվել: Մինչդեռ, որոշ դեպքերում (օրինակ՝ բնական ռեսուրսների կոնցեսիաների դեպքում) պետություններն իրավունք ունեն անհրաժեշտության դեպքում խախտելու պայմանագրով ստանձնած պարտավորությունները, պայմանով, որ պետք է իրականացնեն հատուցում միջազգային իրավունքին համապատասխան:

Annotation: The article is devoted to the issues of state sovereignty in the field of foreign investments. Particularly, the article states that even if states have broad powers on regulating foreign investment, there are certain mechanisms restricting such powers. The article stresses the importance of bilateral investment treaties and international investment agreements under such restrictions.

Аннотация. Статья посвящена изучению вопросов государственного суверенитета в сфере иностранных инвестиций. В частности, в статье говорится, что даже в том случае, если государства обладают широкими полномочиями по регулированию иностранных инвестиций, существуют определенные механизмы, ограничивающие такие полномочия. В статье подчеркивается важность двусторонних инвестиционных договоров и международных инвестиционных соглашений при таких ограничениях.

Բանալի բառեր – *օտարերկրյա ներդրումներ, պետության ինքնիշխանություն, ներդրումային պայմանագրեր, երկկողմ ներդրումային համաձայնագրեր:*

Keywords: *foreign investments, state sovereignty, investment agreements, bilateral investment treaties.*

Ключевые слова: *иностранные инвестиции, государственный суверенитет, инвестиционные соглашения, двусторонние инвестиционные договоры.*

Գ. Չոբանյան – ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ, ասպիրանտ, էլ. փոստ՝ grigorchobanyan@outlook.com:

Ներկայացվել է խմբագրություն՝ 10.02.2020, տրվել է գրախոսության՝ 10.02.2020, երաշխավորվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Ստեփանյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 16.03.2020: